են, իւրեանց մի մեծ եպիսկոպոս մէթրոփոլիտ գնացեալ յորդորեալ է զի հնազանդիցին կայսերն, ասացեալ են նոքա. Որպէս այս ձևովս եկիր գնայ բարով, քեզ չնորհենք։ Եթէ այլ անգամ գաս այսու ձևով, զքեզ կախենք մինչ ի 7 տարուանիս հասնի, երբեմն ևս լուաք թէ զմի եպիսկոպոս իւրեանց մատնեալ են ի ձեռս տաճկաց։ Վասն այսորիկ ի կողմանէ կայսերն ելեալ է հրաման զի ի 7 ամաց ի վեր կոտորեսցեն զամենայն ապըստամբ ուլահսն. այս գործս առնօղքն, եօթն ութ Ռ. զօրք և գատանայք են, որք շրջին և առնեն։...

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ.րդ. Սեբաստացի

1739 Յունվարի 31
ի Պէլրղատ

ԶԶ.

Գերյարգելոյ Աբբայ հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանուրեան Վարդապետի

.... զսպասաւորս ուղարկեցի մերձ ի ժամ ճաշուն, գնացեալ եկն, թէ ոչ գոյ զիր. նաև եթեր զչար լուր ինչ, թէ այս կէս գիշերուն յետ, լուեալ են թէ թուրք զան աւարել, գերել և հրձիգ զվարուշն. ութ հարիւրի չափ են եղեալ նոքա, այստի երկու հազարի չափ հեծե[ա]լ և հետևակ գիշերով գնացեալ ի դուրս, զի դարման կայցեն և ի մէջ առցեն զտաճիկսն. սոքա խմացեալ փախեալ են, և զօրք սոցին ի դէմ լոյս վերստին ի ներքս եկեալ են. և յայլմէ լուաք թէ ոչ ինչ գոյր, և սուտ էր, աստ ամենեքեան յերկիւղի են, զօրք սակաւք են, չորս հազար հազիւ, սոցա բանն և նշմարանք ափշելի է. բազում և զանազան զրոյցք կասկածանք գոն, թէ սուտ և թէ ճշմարիտք իցեն։... Աստ գոյ մի ալպանիացի լաթին եպիսկոպոս իստէֆէու նահանգին, տաճկի ռայէ, սա զնիչն առեալ տարին, փախեալ ընդ բազմաց ժողովրդոց իւրոց եկեալ է աստ, Միքայէլ անուամբ, այր տառապեալ և ցաւագնեալ սրտիւ վասն արարմանց սոցին այսպէս զիպեցելոց։ Բնակի ի վանս Ֆռանչիսկանաց, լաւ գիտէ զլեզու տաճկի, զտալիան և զլաթին և զայլս լեզուս։ Երիտասարդ հասակի, վեց ամիս է, սա է խոստովանահայրն իմ...։ Հերու ի մեծ պահուցն Ճուպիլէօ և թափուրք վասն պատերազմի եղեն, այս ամ ոչինչ։ Ցշարժէ որ յառաջ գրեցի, յետ նորա այլ մի անգամ ևս հանդիպեցաւ, և այլ ոչ տեսաք. այժմ արտաքին շարժն տաճկին երևի, ի սէմէնտր եկեալ ասեն տաճիկք։ Այն տօղրամաճին որ գնաց ընտանեօքն ի նիշ, ընդ որոյ և այլք բազումք էին, գնա և զայլս զոմանս կախեալ, զոմանս ի ցիցն հարեալ զոմանս սպանեալ, փաշան տեղւոյն, և զզաւակսն, զկանայսն, մերթ լուաք թէ թուրքացուցեալ են, և մերթ թէ գերի արարեալք են։...

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1739 մարտի 7, յօր տօնի
սրբոյն թօմայի ազուինացւոյ
ի շաբաթու քառասուն մանկանց
ի Պէլրղատ

ԶԷ.

Գերյարգելոյ Աբբայ հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանուրեան վարդապետի

.... չուելն իմ աստի ևս քան զևս դժուարին և դժուարին է, զի բնաւք ճանապարհք փակեալք են վասն երկիւղի մահուն. ի Վիէննա ևս ասեն չոչորթն տեսանի, և ձայնն լսի։ Ի պոէշպուրկ, որ նաև Բօժուն կոչի, միոյ աւուր ճանապարհ հեռի ի Վիէ-